**Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ անվճար կամ արտոնյալ պայմաններով իրականացվող բժշկական օգնություն և սպասարկում**

**Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ անվճար կամ արտոնյալ պայմաններով իրականացվող բժշկական օգնությունից և սպասարկումից օգտվելու իրավունք ունեն՝**

1) 2 տարի և ավելի անպտղություն ունեցող (բացարձակ ցուցումների դեպքում՝ առանց 2 տարվա սահմանափակման)՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, փախստականի կարգավիճակ ունեցող անզավակ կանայք, որոնք պատկանում են 20-40 (ներառյալ) տարիքային խմբին, ընդ որում՝ 40 տարեկանում հաշվառվելու դեպքում կինը պահպանում է ծրագրի շահառուի կարգավիճակը մինչև 42 տարեկան դառնալը.

2) 28-42 (ներառյալ) տարեկան Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, փախստականի կարգավիճակ ունեցող անզավակ կանայք:

3) 1 երեխա ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ կամ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, փախստականի կարգավիճակ ունեցող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ամուսնությունը գրանցած, 2 տարի և ավելի երկրորդային անպտղություն ունեցող

(բացարձակ ցուցումների դեպքում՝ առանց 2 տարվա սահմանափակման) զույգերը, որոնցից կինը պատկանում է 20-36 (ներառյալ) տարիքային խմբին ընդ որում՝ 36 տարեկանում հաշվառվելու դեպքում կինը պահպանում է ծրագրի շահառուի կարգավիճակը մինչև 39 տարեկան դառնալը.

4) զինվորական ծառայության ընթացքում կամ զինվորական ծառայության ավարտից հետո զինվորական ծառայության հետ կապված պատճառական կապով զոհված (մահացած) որդու՝

Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, փախստականի կարգավիճակ ունեցող ծնողները՝ կնոջ տարիքը սահմանվում է մինչև 42 տարեկանը, ընդ որում՝ 41 տարեկանում հաշվառվելու դեպքում կինը պահպանում է ծրագրի շահառուի կարգավիճակը մինչև 44 տարեկան դառնալը:

5) 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ

հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած), կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված, ինչպես նաև սույն կետում նշված հանգամանքներում ստացած վնասվածքի, խեղման կամ ձեռք բերած հիվանդության հետ պատճառական կապով հետագայում մահացած զավակի ծնողները:

**Քաղաքացին ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.**

1)դիմում՝

2) կնոջ, տղամարդու՝ անձնագիր, նույնականացման քարտ.

3) նախատեսված պահանջներին համապատասխան՝ դիմումատուի կարգավիճակը հավաստող փաստաթղթեր,

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվելու փաստը հավաստող փաստաթուղթը (ամուսնության վկայական՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվելու դեպքում).

5) Էպիկրիզ (բժշկական փաստաթղթեր) նախկինում կիրառված հետազոտման մեթոդների ու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման մասին՝ տրված պացիենտի բուժօգնությունն իրականացրած բժշկական հաստատության կամ տարածքային սպասարկման կանանց կոնսուլտացիայի կողմից (եթե կինը մինչև դիմելը հետազոտվել և (կամ) անպտղության կապակցությամբ ստացել է բժշկական օգնություն):

**Ծրագրում ներգրավվելու համար քաղաքացին իր ընտրությամբ կարող են դիմել 5 բժշկական կազմակերպությունից որևէ մեկը՝**

1. «Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ

2. «Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ

3. «Շենգավիթ բժշկական կենտրոն» ՓԲԸ

4. «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի «Աստղիկ» բժշկական կենտրոն

5. «Ֆերթիլիթի սենթր» ՍՊԸ

**Դիմումների մուտքագրումը և հերթագրումը**

Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար քաղաքացիների դիմումների մուտքագրումն ու հերթագրումն իրականացվում է ըստ դիմելիության ժամկետի՝ առողջապահական էլեկտրոնային համակարգի միջոցով՝ այն կազմակերպության կողմից որին դիմել է շահառուն:

Դիմումները մուտքագրվում են միայն այն դեպքում, եթե դիմումատուն համապատասխանում է վերը նշված հիմնական և լրացուցիչ պայմաններին և դիմումին կից ներկայացնում է համապատասխան փաստաթղթերը՝ լրիվ կազմով (շահառուի կարգավիճակը հավաստող հիմքերը): Նախատեսված փաստաթղթերի թերի լինելու դեպքում դիմումատուն տեղեկացվում է և առաջարկվում է ներկայացնել բացակայող փաստաթղթերը:

Պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով հետազոտությունների և բուժման, այդ թվում՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ, բժշկական օգնության և սպասարկման ծավալներն են՝

1) անպտղության պատճառագիտության ախտորոշում և բուժում,

2) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման նպատակով մինչ արհեստական սերմնավորումն ու արտամարմնային բեղմնավորումն իրականացվող պարտադիր հետազոտություններ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N 214-Ն որոշմամբ սահմանված ծավալներով,

3) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառում ամուսնու կամ դոնորական սերմով արհեստական սերմնավորման մեթոդով՝ սերմնավորման փորձեր առավելագույնը 6 դաշտանային ցիկլի ընթացքում,

4) արտամարմնային բեղմնավորման իրականացման մեկ փորձ,

5) ապասառեցված 2 սաղմերի տեղադրում արգանդի խոռոչ,

6) արտամարմնային բեղմնավորման 2-րդ փորձ՝ պետության կողմից 50% մասնակցությամբ:

Լրացուցիչ տեղեկացնում ենք, որ պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնությունը և սպասարկումը չի ներառում փոխնակ մոր, դոնորական ձվաբջջի և դոնորական սերմնաբջիջների համար փոխհատուցման ծախսերը: